ՀԱՄԱՅՆՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՏԴ 342
DOI: 10.56246/18294480-2025.18-33

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ իրավունքի ինստիտուտի և ՀՀ ՊԿԱ դասախոս
էլփոստ՝ ashotkhachatryan@paara.am
ԱՍԼԻԿՅԱՆ ԱՆԻ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտ,
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, դատավորի օգնական
էլփոստ՝ aniaslikyan1701@gmail.com

Հոդվածում քննարկվում է «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» հասկացությունը, որը ներմուծվել է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ 2015 թվականին ՀՀ Սահմանադրության բարեփոխումների արդյունքում: Օրենսդրության մեջ այս տերմինի ներդրումը որևէ փաստացի փոփոխության չհանգեցրեց: Հատկանշական է այն, որ այս հասկացության ներմուծումն իրականացվել է առանց համակարգված մոտեցման, ինչպես նաև առանց քաղաքացիական օրենսդրության տրամաբանությունը հաշվի առնելու: Արդյունքում մենք ունենք կարգավորումներ, որոնք ոչ մի խնդիր չեն լուծում և իրականում ծանրաբեռնում են օրենսդրությունը: Սա մեծապես պայմանավորված է նրանով, որ հայեցակարգային մակարդակում հանրային իրավունքի իրավաբանական անձի խնդիրն այնքան էլ քաղաքացիական իրավունքի խնդիր չէ հանրային իրավաբանական անձանց քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության մասնատված և ոչ համակարգված կարգավորման պատճառով: Այս սուբյեկտների քաղաքացիական իրավասուբյեկտությունը բխում է նրանց հրապարակային իրավասուբյեկտությունից, որը կանխորոշում է հանրային իրավունքի իրավաբանական անձանց հիմնախնդրի տեսական ըմբռնումը պետական իրավական գիտությունների ոլորտ տեղափոխելու անհրաժեշտությունը: Ընդ որում, այս ամենը ընդգծում է այն կարիքը, որ համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարվեն, որոնք հնարավորություն կտան ավելի արդյունավետ կարգավորելու այս խնդիրները և ապահովելու իրավաբանական անձանց իրավական մասնակցությունը հանրային և քաղաքացիական հարաբերություններում:

Բանալի բառեր՝ *հանրային իրավունքի իրավաբանական անձ, համայնք, կորպորատիվ իրավունք:*

«Ֆիզիկական անձ» և «իրավաբանական անձ» հասկացություններն ավանդական են իրավաբանական գրականության մեջ: Դրանք օգտագործվում են հիմնականում իրավունքի տեսությունում, իսկ վերջին տասնամյակների ընթացքում՝ նաև հանրային իրավունքի բնագավառի ուսումնասիրություններում:

«Հանրային իրավունքի իրավաբանական անձ» հասկացությունը և տեսակները հիմնականում ամրագրված են ռոմանագերմանական իրավունքի երկրների, մասնավորապես Ֆրանսիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Վրաստանի, Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքերում, որտեղ, որպես կանոն, հանրային իրավունքի իրավաբանական անձիք են հանդիսանում պետությունը, վարչատարածքային միավորները, համայնքները, հանրային հիմնարկները, հանրային կորպորացիաները, կրոնական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և այլն: Այս հասկացությունը ամրագրված է նաև Թուրքիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի որոշ երկրների (Արգենտինա, Բրազիլիա, Մեքսիկա, Վենեսուելա և այլն) օրենսդրություններում[1]:

Հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակները յուրաքանչյուր երկրում տարբեր են, և ամեն երկրի ազգային համակարգը, ելնելով մի շարք հանգամանքներից, կարող է չներառել այս կամ այն տեսակի՝ ընդհանուր տեսական իմաստով հանրային իրավունքի իրավաբանական անձը ներպետական իրավաբանական անձանց շրջանակում:

«Հանրային իրավունքի իրավաբանական անձ» կատեգորիան մի կողմից ընդհանրացնող, մյուս կողմից՝ պայմանական հասկացություն է, որը որպես այդպիսին չի կարող որոշել առանձին կազմակերպությունների իրավական կարգավիճակը և նախատեսված էլ չէ դրա համար:

Մինչ օրս հանրային իրավունքի իրավաբանական անձ տերմինն ինքնին կայացած չէ, և, օրինակ, անգլալեզու գրականությունում օգտագործվում են տարբերվող հասկացություններ, որոնց իմաստային ծավալը նույնպես տարբեր է («public legal entity», «legal entity of public law», «public corporation», «legal entity

[1] Տե՛ս Чиркин В. Е. Заметки к дискуссии о юридическом лице публичного права / Государство и право, 2010, No 7, с. 23 – 30.

with public participation», «publicly traded company», «public company», «legal entity of public interest» / «public interest company»)[1]:

«Հանրային իրավունքի իրավաբանական անձ» եզրույթն առավել խորապես մեկնաբանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ «իրավաբանական անձ» հասկացության զարգացմանն ու բնորոշմանը: «Իրավաբանական անձ» հասկացության տակ տարբեր ժամանակներում և տարբեր իրավակարգերում տարբեր երևույթներ են ընկալվել:

«Իրավաբանական անձ» եզրույթն առաջացել է միջնադարում: Քննարկվող տերմինի հայր են համարում Հռոմի պապ Ինոսկենտիոս IV-ին, որը, մեկնաբանելով հռոմեական մասնավոր իրավունքը, փորձում էր կարգավորել եկեղեցական որոշ միությունների վերաբերյալ հարցեր[2]:

Հասկացությունն իր հետագա զարգացումն ապրեց Ֆրանիսայի վարչական և Գերմանիայի քաղաքացիական իրավունքում, և 19-րդ դարավերջին, երբ գրվում էր Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը, «իրավաբանական անձ» եզրույթն ընկալվում էր ավելի լայն իմաստով և ներառում էր ֆիզիկական անձ չհամարվող և իրավունակությամբ օժտված ցանկացած սուբյեկտի: Այդ պատճառով և՛ Ֆրանսիայում[3], և՛ Գերմանիայում[4] պետությունը դիտարկվում է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

---

[1] Տե ս Сулеи˘менов М.К., Карагусов Ф.С., Кот, А.А., Дуи˘сенова, А.Е., Скрябин, С.В. О понятии и правовом статусе юридических лиц публичного права в законодательстве некоторых развитых иностранных государствах и бывших советских республиках: https://www.zakon.kz/4902443-o-ponyatii-i-pravovomstatuse.html (վերջին մուտքը՝ 23.02.2024թ.):

[2] Տե ս Maximilian Koessler The Person in Imagination or Persona Ficta of the Corporation // Louisiana Law Review Volume 9 | Number 4 // մայիս, 1949, էջեր 435-438:

[3] Տե ս George A. Bermann, Etienne Picard Introduction to French Law, Kluwer Law International B.V., 2008 էջ 336:

[4] Տե ս Эннекцерус Л. Курс германского гражданского права. Том I, полутом 1: Введение и общая часть / Л. Эннекцерус, Т. Кипп, М. Вольф; М.: Издательство иностраннои˘ литературы, 1949, էջ 422:

Հոդվածի վերլուծությունից բխում է, որ իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մեկ այլ՝ 128-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից:

Այս տեսանկյունից օրենսդիրը դրսևորում է հակասական մոտեցում, և կարելի է հանգել տարատեսակ ընկալման: Մի դեպքում կարելի է եզրակացնել, որ օրենսդիրը, ձեռնպահ մնալով նշված սուբյեկտներին իրավաբանական անձի կարգավիճակ տալուց, նրանց նույնացնում է իրավաբանական անձանց հետ, իսկ մյուս դեպքում օրենսդիրը հիշյալ սուբյեկտներին չի նույնացնում իրավաբանական անձանց և սահմանում է իրավաբանական անձանց վերաբերող նորմերի սուբսիդիար կիրառություն: Սակայն յուրաքանչյուր պարագայում իրավաբանական անձի իրավունքներ ունենալը և իրավաբանական անձ չհանդիսանալը ներքին հակասություն է, որն ընդունելի չի կարելի համարել:

Թեև հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը բխում է միջազգային պրակտիկայից, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի տալիս այդ տարանջատումը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգում[1] և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում[2] ամբողջ ծավալով չեն բացահայտվել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը, հանրային իրավուքի իրավաբանական անձանց բնորոշ գծերը և դրանով պայմանավորված՝ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնահատկությունները:

---

[1] Տե ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ, գլուխ 5՝ իրավաբանական անձինք. Հեղ. Ավետիսյան Վ., Սերոբյան Դ., Երեւան, 2014թ., էլեկտրոնային ռեսուրս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656566421131_Iravabanakan_andinq.pdf (վերջին մուտք՝ 08.03.2024):

[2] Տե ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք. Հեղ. Ավետիսյան Վ., Սերոբյան Դ., էլեկտրոնային ռեսուրս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_3463498407311_qax_or_popox-1.pdf (վերջին մուտք 08.03.2024):

Չնայած այն հանգամանքին, որ իրավաբանական գրականության մեջ իրավունքի բաժանմանը (հանրայինի և մասնավորի) էական նշանակություն չեն տալիս այդ բաժանումը, իրավաբանական անձանց կարգավորման առումով պետք է համարել հիմնական և առանցքային: Նշենք, որ ռոմանագերմանական իրավունքի համաարգի երկրները, որոնք ճանաչում են իրավունքի բաժանումը մասնավորի և հանրայինի, սովորաբար տարբերակում են մասնավոր և հանրային իրավունքի իրավաբանական անձանց: Այս կապակցությամբ Օ. Ա. Յաստրեբովը նշում է, որ «իրավաբանական անձանց բաժանումը հանրայինի և մասնավորի գործնականում բնորոշ է գրեթե բոլոր արտասահմանյան երկրներին, որտեղ առկա է ինչ-որ չափով իրավունքի բաժանում հանրայինի և մասնավորի»[1]:

Թերևս պետք է նշել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման հարցի շուրջ միանշանակ կարծիք չկա. կան ինչպես այս գաղափարի կողմնակիցներ, այնպես էլ դեմ հանդես եկողներ:

Հանրային իրավունքի իրավաբանական անձանց օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտության դիրքորոշման կողմնակիցները համապատասխան սուբյեկտներին դիտարկում են ոչ միայն որպես մասնավոր-իրավական, այլև որպես հանրային-իրավական հաստատություններ, որոնց նշանակությունը բնավ էլ քաղաքացիական շրջանառությանը մասնակցելը չէ, ավելին՝ քաղաքացիա-իրավական նորմերը դրանց նկատմամբ գործում են խիստ սահմանափակ և այնքանով, որքանով չեն հակասում հատուկ դրանց ստեղծման համար հիմք հանդիսացած իրավական ակտերին[2]:

Հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման անհրաժեշտությունը ՀՀ-ում պայմանավորված է նախ և առաջ ՀՀ Սահմանադրության՝ 2015 թվականի դեկտեմբերի 15-ի փոփոխություններով: ՀՀ Սահմանադրության 180 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է: Նույնպիսի իրավական կարգավիճակ է տրված նաև միջհամայնքային միավորմանը (համաձայն Սահմանադրության 189 հոդվածի 3-րդ մասի): Փաստացի ՀՀ օրենսդրությունը ճանաչում է հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան որպես իրավաբանական անձի տեսակ, սակայն չի մանրամասնում, թե ինչ է հանրային իրավունքի

---

[1] Տե՛ս Ястребов О.А., Некоммерческие организации как субъекты публичного права: Учеб. пособие. — М., 2009. էջ 169:

[2] Տե ս Баженова О., Органы местного самоуправления как юридические лица: проблемы реализации законодательнои˘ концепции.// Муниципальная служба: правовые вопросы, N 2. Изд-во Юрист, Москва, 2008, էջ 2-5:

իրավաբանական անձը, ինչպես է հարաբերվում մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց հետ և մի շարք այլ հարցեր:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, ըստ որի՝ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված հանրաճանոթ հասկացություններ կամ տերմիններ, այս հարցերի պատասխանները պետք է արտացոլվեն օրենսդրության մեջ:

Համայնքի՝ որպես իրավաբանական անձի կառուցակարգի կառուցումը - նպատակ է ունեցել սահմանափակել նրա իշխանությունը և նրա գործունեությունը ենթարկել իրավաբանական նորմերի կարգավորումներին (սահմանադրությանը և օրենքներին): Միևնույն ժամանակ այդպիսի մոտեցումը թույլ է տալիս ընդգծել համայնքի ներկայացուցչական բնույթը հասարակության հետ հարաբերություններում: Այս ամենը թույլ է տալիս շեշտադրել երկու կարևոր հանգամանք՝

1. հնարավորություն տալ համայնքին հանդես գալ որպես կազմակերպական կազմավորում, որի գործունեությունը նորմատիվորեն կարգավորված է,
2. համայնքը դիտարկել որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն սուբյեկտ:

Կարծում ենք, որ համայնքը սոսկ միություն չէ, այլ իրավական միություն է, որը կազմավորվում է մարդկանց կողմից և գործում է իրավական նորմերին համապատասխան: Համայնքը գոյություն ունի ոչ թե բնությունից, այլ կազմավորվում է մարդկանց կողմից, այն լոկ տարածք չէ, ոչ էլ մարդկանց բազմություն, այլ իրենից ներկայացնում է մարդկանց միություն, որոնք կապված են միասնական իշխանությամբ և տարածքով, այն մարդկանց միություն է՝ որպես մեկ ամբողջություն: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրահանգել, որ համայնքը ոչ թե հիմնարկ է, որը սպասարկում է այլ անձանց կարիքները, այլ իրավաբանական անձ է, որն իր մեջ ներառում է համայնքի բնակիչներին: Համայնքը միավորում է, որը լիազորված է իշխել իր անդամների նկատմամբ, ինչպես նաև նրանց համար հրապարակել իրավական նորմեր և հրամաններ, ղեկավարել նրանց:

Այս ամենի հիման վրա կարելի է առանձնացնել համայնքի՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձի բնորոշ հետևյալ հատկանիշները՝

1. ցանկացած համայնքի հիմնման և գործունեության նպատակն է համայքի բնակիչների ընդհանուր շահերի բավարարումը, այսինքն՝ համայնքն իրականացնում է հանրային գործառույթներ,
2. համայնքը և նրա մարմիններն ունեն իշխանական լիազորություններ,

3. համայնքը հանդիսանում է հանրային և մասնավոր բնույթի իրավունքների և պարտականությունների կրող, օժտված է իրավասուբյեկտությամբ,
4. հիմնվում և լուծարվում է հատուկ կարգով,
5. ունի գույքային հիմք՝ համայնքային սեփականություն,
6. մասնակցում է քաղաքացիական շրջանառությանն այլ սուբյեկտների հետ հավասարության հիմունքներով:

Վերոգրյալի հիման վրա հանգել ենք հետևյալին՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 180-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է՝ «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է», իսկ 189-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ է նաև միջհամայնքային միավորումը: Բնական է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան չի կարող սահմանափակվել միայն այդ անձանցով: ՀՀ օրենսդրության մեջ դրա ամրագրումը պետք է հանգեցնի նաև դրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը, որպիսիք, ըստ մեզ, պետք է համարվեն պետությունը, մունիցիպալ կազմավորումները, ՀՀ կենտրոնական բանկը, հիմնարկները (պետության կամ համայնքի հիմնադրած), ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առեւտրային կազմակերպություններ, պետական հիմնադրամներ, ինքնակարգավորվող կազմակերպություններ (մասնագիտական միություններ) և այլն):

2. Կարծում ենք՝ ներկայումս չկա խոչընդոտ, որ ՀՀ օրենսդրությունը փաստացիորեն փոխառի հանրային իրավունքի իրավաբանական անձանց կառուցակարգը՝ նպատակ ունենալով կանոնակարգել այն իրավաբանական անձանց իրավական վիճակը, որոնք ներկայումս չեն տեղավորվում քաղաքացիական իրավունքի մասնագետների մշակած իրավաբանական անձի հասկացության շրջանակներում, ինչպես նաև ավելի որոշակի բնորոշել իրավաբանական անձանց քաղաքացիական կարգավիճակը, որոնք իրականացնում են պետական և մունիցիպալ գույքի կառավարման գործառույթներ: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման անհրաժեշտությունը առաջնահերթ պայմանավորված է այն բանով, որ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել Եվրոպայի Խորհրդի և Եվրոպական Միության անդամ երկրների իրավական համակարգերին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումների պահանջներին:

3. Կարծում ենք՝ հանրային իրավունքի իրավաբանական անձը իրավաբանական անձանց համակարգում պետք է դառնա նոր կազմակերպաիրավական

ձև, որի սահմաններում իրենց ամրագրումը կստանան կազմակերպությունները, որոնք հիմնադրում են հանրային իրավական կազմավորումները, որոնք ունեն հանրային գործառույթներ, և նրանց գործունեության հիմնական նպատակն է հանրային, հասարակական շահերի բավարումը:

4. Հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիայի փոխառումը թույլ կտա հնարավորինս միասնականացնել քաղաքացիական շրջանառության այն բոլոր իրավաբանական անձանց գործունեությունը, որոնք հիմնադրում են հանրային իրավական կազմավորումները, հնարավորինս միակերպ լուծել շուկայի մասակիցների համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են քննարկվող սուբյեկտների՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և նրանց քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Վ., Սերոբյան Դ., ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ, գլուխ 5՝ իրավաբանական անձինք, Երեւան, 2014:
2. Ավետիսյան Վ., Սերոբյան Դ., ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք:
3. Баженова О., Органы местного самоуправления как юридические лица: проблемы реализации законодательнои˘ концепции.// Муниципальная служба: правовые вопросы, N 2, Изд-во Юрист, Москва, 2008г
4. Сулеименов М. К., Карагусов Ф .С., Кот А. А., Дуйсенова А. Е., Скрябин С. В., О понятии и правовом статусе юридических лиц публичного права в законодательстве некоторых развитых иностранных государствах и бывших советских республиках.
5. Чиркин В. Е., Заметки к дискуссии о юридическом лице публичного права / Государство и право, 2010, N 7
6. Эннекцерус Л., Курс германского гражданского права / Введение и общая часть, Л. Эннекцерус, Т. Кипп, М. Вольф, М., Издательство иностранной литературы, 1949.
7. Ястребов О.А., Некоммерческие организации как субъекты публичного права: Учеб. Пособие, М., 2009.
8. George A. Bermann, Etienne Picard Introduction to French Law, Kluwer Law International B.V., 2008,

9. Maximilian Koessler The Person in Imagination or Persona Ficta of the Corporation // Louisiana Law Review Volume 9 | Number 4 // մայիս, 1949

THE COMMUNITY AS A LEGAL ENTITY UNDER PUBLIC LAW: FUNDAMENTALS OF MODERN THEORY

KHACHATRYAN ASHOT
Doctor of Law, Professor
Lecturer of the National Academy of Sciences
and the Public Administration
Academy of the Republic of Armenia,
e-mail: ashotkhachatryan@paara.am
ASLIKYAN ANI
Master's student at the Academy of Public
Administration of the Republic of Armenia
Assistant of the Judge of the Civil Court of Appeal,
the Republic of Armenia
e-mail: aniaslikyan1701@gmail.com

The article discusses the concept of "legal entity under public law," which was introduced into the legal system of the Republic of Armenia in 2015 as a result of constitutional reforms. The introduction of this term into the legislation did not lead to any substantial change. It is notable that the introduction of this concept was carried out without a systematic approach, as well as without considering the logic of civil legislation. As a result, we have regulations that do not solve any problems and, in fact, burden the legislation. This is largely due to the fact that, at the conceptual level, the issue of legal entities of public law is not primarily a civil law issue, due to the fragmented and unsystematic regulation of the participation of public legal entities in civil legal relations. The civil legal personality of these entities stems from their public legal personality, which predetermines the necessity of transferring the theoretical understanding of the issue of public legal entities into the domain of public law sciences. Moreover, all of this emphasizes the need for relevant legislative changes that will allow more effective regulation of these issues and ensure the legal participation of legal entities in public and civil relations.

Keywords: *public law, legal entity, community, corporate law*

ОБЩИНА КАК ЮРИДИЧЕСКОЕ ЛИЦО ПУБЛИЧНОГО ПРАВА: АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ ТЕОРИИ

ХАЧАТРЯН АШОТ
Доктор юридических наук, профессор
Преподаватель Национальной академии наук РА и Академии государственного управления РА
email` ashotkhachatryan@paara.am
АСЛИКЯН АНИ
Магистрант Академии государственного управления РА
Помощник судьи апелляционного гражданского суда РА
email`aniaslikyan1701@gmail.com

В статье рассматривается понятие «юридическое лицо публичного права», которое было введено в правовую систему Республики Армения в 2015 году в результате реформ Конституции. Введение этого термина в законодательство не привело к существенным изменениям. Примечательно, что введение этого понятия было осуществлено без системного подхода, а также без учета логики гражданского законодательства. В результате мы имеем нормативные акты, которые не решают никаких проблем и фактически перегружают законодательство. Это в значительной степени объясняется тем, что на концептуальном уровне вопрос юридического лица публичного права не является прежде всего проблемой гражданского права, из-за фрагментарного и несистематичного регулирования участия публичных юридических лиц в гражданских правоотношениях. Гражданская правосубъектность этих субъектов вытекает из их публичной правосубъектности, что предопределяет необходимость переноса теоретического понимания проблемы юридических лиц публичного права в область публичных правовых наук. Более того, все это подчеркивает необходимость внесения соответствующих законодательных изменений, которые позволят более эффективно регулировать эти вопросы и обеспечить правовое участие юридических лиц в публичных и гражданских отношениях.

Ключевые слова: *публично-правовое юридическое лицо, сообщество, корпоративное право.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.11.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 27.11.2024թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: